

ՀԱՊԿ – ՀԱՅԱՍՏԱՆ

ԸՍՏ ԼԱԻՐՈՎԻ՝ ՀԱՊԿ-Ի ԵՐԿԻՐՆԵՐԸ ՀԱՄԱԶԱՅՆԱԾ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՆՈՒԵԼԻՔ ՔԱՅԼԵՐԸ

ՀԱՊԿ-ի (Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութիւն) անդամ երկիրները համաձայնած են քննարկել Հայաստանի դէմ քայլերու ձեռնարկելու հարցը՝ կազմակերպութեան կանոնադրութեան համապատասխան: Այս մասին յայտարարած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով՝ կառույցի Արտաքին գործոց նախարարներու խորհուրդի նիստէն ետք, որուն երեւան չէ մասնակցած:



Լաւրով պնդած է, որ կը դիմեն այս քայլին, քանի որ Հայաստան աւելի քան երկու տարի է ի վեր անդամավճար չէ վճարած: “Հայաստանի մէջ ընտրութիւններու օրը իմ գործընկերս՝ Արարատ Միրզոյեանը, ՀԱՊԿ-ի վերաբերեալ հարցումի մը ի պատասխան, ըսած է, թէ Հայաստան անդամավճար չի վճարեր, որովհետեւ չի մասնակցիր կազմակերպութեան աշխատանքներուն: Մենք այսօր համաձայնեցանք քննարկել ՀԱՊԿ-ի կանոնադրութեան համապատասխան յօդուածին կիրարկման հարցը”, – ըսած է ան:

ՀԱՊԿ-ի կանոնադրութեան 25-րդ յօդուածին համաձայն՝ պարտքերը չվճարելու պարագային խորհուրդը կրնայ կասեցնել տուեալ պետութեան քաղաքացիներուն՝ կառույցի ծիրէն ներս բաժնեշահաւորի պաշտօններ առաջադրելու, ինչպէս նաեւ քուէարկելու իրաւունքը: Իսկ 20-րդ յօդուածը կը նշէ, որ եթէ պարտաւորութիւններու կատարման մէջ թերացումը շարունակուի, խորհուրդը կրնայ որոշում կայացնել տուեալ երկիրը կազմակերպութենէն հեռացնելու մասին, որու քուէարկութեան Հայաստան իրաւունք պիտի չունենայ մասնակցելու:

Յիշեցնենք, որ 2024-ին Հայաստան սառեցուցած էր իր մասնակցութիւնը ՀԱՊԿ-ի միջոցառումներուն ու ռազմափորձերուն եւ հրաժարած էր ֆինանսաւորումէն, սակայն պաշտօնապէս դուրս գալու դիմում չէր ներկայացուցած: Երեւան խստօրէն կը քննադատէ կառույցը, քանի որ ան չպաշտպանեց իր անդամը 2022-ի ազերպայճանական յարձակումներուն ընթացքին: Ապրիլ 1-ին, Մոսկուայի մէջ Փութինի հետ հանդիպման՝ վարչապետ Փաշինեան վերահաստատած էր այս դիրքորոշումը՝ նշելով, որ չի կրնար հանրութեան բացատրել ՀԱՊԿ-ի անգործութիւնը:

«ՉԵՆՔ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՐ ՈՐԵԻՔ ԲԱՆ ՓՈՒՆԵԼՈՒ»

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԶՎՃԱՐԵԼ ՀԱՊԿ-Ի ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԸ

Իրաց այս կացութեան մէջ, վարչապետ Փաշինեան Յունիս 11-ին յայտարարած է, թէ երեւանին այլ բան չի մնար, քան ընդունիլ ՀԱՊԿ-էն հեռացման որոշումը, եթէ ռազմական դաշինքի անդամները նման քայլի դիմեն:

“Գիտեմ, որ ՀԱՊԿ-էն հեռացման գործիքակազմ կայ, կը գործէ”, եւ եթէ անդամ երկիրները որոշեն Հայաստանը հեռացնել, մենք ստիպուած պիտի ըլլանք այդ որոշումը ընդունելու ի գիտութիւն, ուրիշ ընելիք չունինք”, – ըսած է Փաշինեան:

«Ազատութիւն» ձայնասփիւռի հարցումին, թէ արդեօք Հայաստան պիտի շարունակէ՞ չվճարել անդամավճարները, թէ՞ կարելի է յառաջիկային վերանայիլ դիրքորոշումը, վարչապետը կարճ պատասխանած է. “Չենք պատրաստուիր որեւէ բան փոխելու”: Ան աւելցուցած է, որ ստեղծուած իրավիճակը զինք չի մտահոգեր: ■

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԹՈՅԼ ԿՈՒ ՏԱՅ ԽՈՒՍԱՓԻԼ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԷ»

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՍՈՒԼԻՍԻՆ ԳԼԽԱԽՈՐ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Յունիս 11-ի իր ասուլիսին ընթացքին շեշտած է, որ Հայաստանի իշխանութիւնները կը փափաքին պահպանել խաղաղութեան օրակարգը, ինչ որ թոյլ կու տայ խուսափիլ նոր պատերազմէ: Ան հաստատած է, որ կառավարութեան կազմին մէջ լայնածաւալ փոփոխութիւններ չեն սպասուիր եւ յոյս յայտնած է, որ Հայաստան-Թուրքիա երկաթուղին կարելի եղածին չափ շուտ պիտի բացուի: Ըստ վարչապետին՝ այնքան ատեն որ խաղաղութեան օրակարգը կը յարգուի, պատերազմ պիտի չըլլայ: Ան այս ծիրէն ներս կարեւոր համարած է TRIPP ծրագրին դերը, որ կ'ենթադրէ երկաթուղիներու եւ մայրուղիներու գործարկում:

Անդրադառնալով Ազերպայճանի հետ յարաբերութիւններուն՝ վարչապետը կոչ ուղղած է գրացի երկրին՝ միասին աշխատելու անհետացածներու եւ գերիներու հարցերուն շուրջ:

Խօսելով ընտրական գործընթացներուն մասին՝ Փաշինեան մեղադրած է ընդդիմութիւնը ընտրակաշառք բաժնելու յանցանքով եւ պնդած, որ այդ գործով մեղաւորները պէտք է յայտնուին անազատութեան մէջ:

ՀԱՊԿ-ի եւ Ռուսաստանի հետ կապուած հարցերուն անդրադառնալով եւ խօսելով կազմակերպութենէն հաւանական հեռացման մասին, ան նշած է, որ Հայաստան պարզապէս ի գիտութիւն պիտի ընդունի ՀԱՊԿ-ի համապատասխան որոշումը, եթէ այդպիսին ըլլայ: Միաժամանակ, ան աւելցուցած է, որ Ռուսաստան կ'այցելէ, եթէ համապատասխան հրաւեր ստանայ:

Ինչ կը վերաբերի յատկապէս ռուսական կազմի սակագիններուն կտրուկ թանկացման առնչուող մտավախութիւններուն ու ռուսական շուկային վերաբերող տնտեսական հարցերուն, վարչապետը յոյս յայտնած է, որ պայմանագրային պարտաւորութիւնները պիտի ապահովուին՝ ընդգծելով նաեւ այլընտրանքային տարբերակներու դիտարկման անհրաժեշտութիւնը: ■

ՀԱՅԱՍՏԱՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆ Կ'ԱՐԳԻԼԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻԻՂԱՄԹԵՐՔԸ, ՄԻՆՉ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՆՈՒԱՃԷ ԵԻՐՈՊԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ

2026 Յունիս 12-էն

սկսեալ, Ռուսաստանի «Ռոսսելխոզնատգոր» ծառայութիւնը կը սահմանափակէ Հայաստանէն՝ մեկուսացման ենթակա (*) ապրանքներու ներածումը, նոյնիսկ ռուսական տարածքէն փոխադրումը դէպի ԵԱՏՄ-ի երկիրներ: Որոշումը պատճառաբանուած է հաշկական չորցած լուրիկին, դեղձին եւ ընկոյզին մէջ վնասակար «գապրա» բզէզի յայտնաբերումով, ինչ որ ըստ ռուսական կողմին ցոյց կու տայ Հայաստանի վերահսկողութեան անարդիւնաւէտութիւնը:

Մինչ Ռուսաստան կը շարունակէ արգիլել հաշկական ապրանքները, Հայաստանի Տնտեսութեան նախարար Գէորգ Պապոյեան խորհրդարանին (Շաբ. էջ 4)



(*) Մեկուսացման ենթակա ապրանքները (produits mis en quarantaine) այն ապրանքանիւթերը, հումքերն ու մթերքներն են, որոնք արտադրական կամ առեւտրային գործընթացէն ժամանակաւորապէս կ'առանձնացուին: Այս կանխարգելիչ մեկուսացումը կարելիութիւն կ'ընձեռէ ստուգելու անոնց համապատասխանութիւնը՝ նախքան օգտագործումը, վաճառքը կամ սպառումը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ՆՈՐ ԾՐԱՐԻՆ ՄԷՋ ԸՆԴԳԻՐՈՒՄ Է ՆԱԵՒ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Եւրոպական յանձնաժողովը Ռուսաստանի դէմ պատժամիջոցներու 21-րդ ծրարի նախագիծին մէջ ընդգրկած է նաեւ Ռուս ուղղափառ եկեղեցւոյ առաջնորդ Կիրիլ պատրիարքը: Յանկին մէջ կան քաղաքական գործիչ Վլատիմիր Մետինսքիի, պետական մեծ մարմիններու եւ առեւտրային ընկերութիւններու ղեկավարներու անուններ ան:

Փաստաթուղթին մէջ Կիրիլ պատրիարքին ընդգրկումը կը բացատրուի անով, որ հոգեւոր առաջնորդը կ'աջակցի Ուքրաինայի մէջ ռուսական



բանակի գործողութիւններուն, իսկ Վլատիմիր Մետինսքին կը նկատուի պետական քարոզչութեան առանցքային դէմքերէն մէկը:

Յանկին մաս կը կազմեն բազմաթիւ անուններ՝ տարբեր մարզաձեւերու դաշնակցութեանց նա-

խագահներէն մինչեւ գործարարներ, հեռատեսիլի հաղորդավարներ, զինուորականներ... Իսկ իրաւաբանական անձերու ցանկին վրայ են Մոսկուայի սակարանը, «Սիսթեմա» բաժնետիրական ելեւմտական ընկերութիւնը, «Ռոսսելխոզպան»-ը եւ «SOU.ՌՖ» գրամատունը:

Ռուսաստանի դէմ պատժամիջոցներու 21-րդ ծրարը ԵՄ-ը շրջանառութեան մէջ դրած է Յունիս 10-ին: Փաստաթուղթին նախագիծը Պրիւսէի մէջ ներկայացուցած է Եւրոպական յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն Լայէնը: Պատժամիջոցներուն համաձայն՝ պիտի արգիլուի Ուքրաինա՝ ռուսական ներխուժման բոլոր մասնակիցներուն մուտքը ԵՄ-ի տարածք, պատժամիջոցներ պիտի սահմանուին Ռուսաստանի մէջ գործող 31 գրամատուններու նկատմամբ:

Բացի ատկէ՝ Եւրոպական յանձնաժողովը կ'առաջարկէ արգիլել շարք մը ապրանքատեսակներու, որոնց շարքին՝ ինքնաշարժի պահեստամասերու առաքումը Ռուսաստան: ■

ԹՈՒՐԳԻԱ – ԻՍՐԱՅԷԼ

ԹՈՒՐԳԻՈՅ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿՐԿԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ՓՈԽԱՆԱԿԱԾ ԵՆ

Թուրքիոյ նախագահ Իսրայէլի վարչապետը ամբաստանած է «Հիթլերի ճամբով ընթանալ»-ու մեղադրանքով: Մինչ այդ ալ, Պենիամին Նեթանիահուն յայտարարած էր, թէ էրտողան «հակասեմական բռնապետ մըն է, որ քիւրտերուն դէմ ցեղասպանութիւն գործած է»:

Իսրայէլի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները կտրուկ կերպով վատթարացած են 2023-ի Հոկտեմբերէն՝ Կազայի պատերազմէն ի վեր, եւ երկու կողմերը պարբերաբար իրարու հասցէին ցեղասպանութեան մեղադրանքներ ու հրապարակային վիրաւորանքներ կը հնչեցնեն:

Այս վերջին հեռակայ բանավէճը բռնկած է Յունիս 10-ին, երբ էրտողան յայտարարած է, որ Լիբանանի եւ Սուրիոյ մէջ Իսրայէլի գործողութիւնները սպառնալիք են Թուրքիոյ անվտանգութեան համար:

Նեթանիահուն անմիջապէս հակադարձած է յայտարարելով. «Հակասեմական բռնապետ էրտողան, որ ցեղասպանութիւն կը գործէ քիւրտերուն դէմ, կ'աջակցի «Համաս» ահաբեկչական կազմակերպութեան, կը ճնշէ իր սեփական ժողովուրդը եւ կը բանտարկէ քաղաքական մրցակիցները, վերջին մարդն է, որ կրնայ բարոյականութեան դասեր տալ Իսրայէլին»:

Իսրայէլի վարչապետը պնդած է նաեւ, թէ իր երկիրը պիտի շարունակէ «ուժային գործողութիւններու ձեռնարկել Իրանի եւ անոր դաշնակիցներուն դէմ, որոնք կը սպառնան Մերձաւոր Արեւելքին եւ ամբողջ աշխարհին»:

NOR HARATCH

Journal trihebdomadaire en langue arménienne

Journal édité par CSCRA – 214, rue du Faubourg Saint-Martin - 75010 Paris

Adresse postale : Nor Haratch – 25 bis, rue de Brie, 94520 Mandres-les-Roses

contact@norharatch.com / abonnement@norharatch.com

Directeur de publication : Jirair Jolokian

CPPAP : 1125 I 90193 / ISSN : 2105-7672

Imprimé et distribué par Eucles Daily – 24, rue Turgot, 75009 Paris

Prix d'Abonnement annuel Formule intégrale : (France) : 300 € / (Hors France) : 370 €

Pour les virements bancaires :

BNP-Paribas – Agence Paris Montholon (00777)

IBAN - FR76 3000 4007 7700 0104 3954 488 / BIC - BNPAFRPPXXX

ՀԱՅԱՍՏԱՆ – ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ԴԵՍՊԱՆ ՎԱՍԻԼԻՍ ՄԱՐԱԿՈՍ ԿՈՂՋՈՒՆԷ ԱՐԹՈՒՐ ՕՍԻՊԵԱՆԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

«Կողջունեմ Արթուր Օսիպեանը ազատ արձակելու որոշումը: Ասիկա դրական զարգացում է: Ժողովրդավարութեան, հիմնական իրաւունքներու, պատշաճ գործընթացի եւ արտայայտուելու ազատութեան նկատմամբ յարգանքը Եւրոպական Միութեան եւ Հայաստանի հասարակաց արժէքներուն առանցքային մասը կը կազմեն», – X-ի իր էջին գրած է Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Վասիլիս Մարակոս:



«Մենք պիտի շարունակենք հետեւիլ այս գործին», – նշուած է դեսպանի գրառումին մէջ:

Յիշեցնենք, որ վարչապետին հետ վիճելէն ետք ձերբակալուած Օսիպեան 23 օր նուպարաշէնի բանտին մէջ մնալէ ետք, Յունիս 10-ի երեկոյեան ազատ արձակուած է: Բռնութիւն գործադրելու հրապարակային կոչերու, խուլիկանութեան եւ քարոզչութիւնը խոչընդոտելու յօդուածներով մեղադրուող երիտասարդը ի նշան բողոքի հացադուլ յայտարարած էր՝ նիկոյ Փաշինեանէն պահանջելով ներողութիւն խընդրել զինք «[Արցախէն] փախած» անուանելուն եւ վիրաւորելուն հաժմար:

Յունիս 7-ի խորհրդարանական ընտրութիւններէն երկու օր առաջ, Մարակոս Օսիպեանի հարցը քննարկած էր Մարդկային իրաւանց պաշտպան Անահիտ Մանասեանին հետ: ■

ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐԳԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԳԻՈՅ ՏԱՐԱԾՔՈՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՈՒՂԱՐԿԷ ԼԻԲԱՆԱՆ

Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ գտնուող «Մարգարա» անցակէտը պիտի բացուի Յունիս 12-էն 22, որպէսզի Հայաստանի կողմէ Լիբանան ուղարկուող մարդասիրական օգնութեան բեռները տեղափոխուին Թուրքիոյ տարածքով:



Հայաստանի կառավարութեան համապատասխան որոշումը ընդունուած է Յունիս 11-ի նիստին ընթացքին:

Հայաստանի եւ Լիբանանի համապատասխան գերատեսչութիւններու ներկայացուցիչներուն միջեւ կայացած աշխատանքային հանդիպումներուն համաձայնութիւն գոյացած է ու որոշուած՝ քննարկել նաեւ Հայաստանի կողմէ Լիբանանին մարդասիրական աջակցութիւն ցուցաբերելու հարցը: Ըստ այդմ՝ կարելիութիւն պիտի ստեղծուի մարդասիրական օգնութիւնը արագ եւ նուազ ծախսերով հասցնել Լիբանան:

Յիշեցնենք, որ «Մարգարա» անցակէտը չի գործեր Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանին փակ ըլլալուն պատճառով: Անիկա միակողմանիօրէն փակուած էր Թուրքիոյ կողմէ՝ 1993-ին: ■

ՄԱՔՐՈՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԾ Է ՓԱՇԻՆԵԱՆՐ՝ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ՏԱՐԱԾ ՅԱՂԹԱՆԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Ֆրանսայի նախագահ էմանուել Մաքրոն X-ի (նախկին «Թուիթթեր») իր էջով շնորհաւորած է նիկոլ Փաշինեանը՝ խորհրդարանական ընտրութիւններուն անոր ղեկավարած կուսակցութեան արձանագրած յաջողութեան առթիւ:

«Իմ ամենաշերմ շնորհաւորութիւններս, սիրելի՛ նիկոլ Փաշինեան, խորհրդարանական ընտրութիւններուն այս համոզիչ յաղթանակին առթիւ: Ուրախ եմ քու կողքիդ շարունակելու մեր սկսած աշխատանքը՝ ա՛լ աւելի ամրապնդելու համար մեր գործակցութիւնը՝ ի նպաստ մեր ժողովուրդներուն, սատարելու Հայաստանի խաղաղութեան ու ինքնիշխանութեան եւ աջակցելու Եւրոպայի հետ մերձեցման թափին», — գրած է Մաքրոն:

ԹՐԱՄՓԻ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՆՆԵՐԸ

ԱՄՆ-ու նախագահը շնորհաւորած է նիկոլ Փաշինեանը՝ «ընտրութիւններուն տարած համոզիչ յաղթանակին առթիւ»:



«Ես շատ հպարտ էի անոր վերընտրութեան աջակցելով եւ կասկած չունիմ, որ անոր առաջնորդութեամբ գեղեցիկ Հայաստանը պիտի հասնի մեծութեան ու յաջողութեան այնպիսի մակարդակներու, որոնք պիտի գերազանցեն բոլորիս ամենահամարձակ սպասումները», — գրած է Թրամփ «Truth Social»-ի իր էջին վրայ:

Յունիս 7-ի խորհրդարանական ընտրութիւններուն «Քաղաքացիական պայմանագիր»-ի յաղթանակին առթիւ՝ Հայաստանի վարչապետին նախապէս իր շնորհաւորութիւնները յայտնած էր նաեւ Միացեալ Նահանգներու Արտաքին գործոց նախարար Մարքո Ռուպիօն:

Նախընտրական շրջանին Միացեալ Նահանգներու նախագահը իր լիակատար աջակցութիւնը յայտնած էր Հայաստանի վարչապետին:

ԷՐՏՈՂԱՆԻ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՆՆԵՐԸ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան շնորհաւորական ուղերձ յղած է վարչապետ նիկոլ Փաշինեանին՝ խորհրդարանական ընտրութիւններուն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան յաղթանակին առթիւ:

ՀՀ կառավարութեան լրատուական ծառայութեան համաձայն՝ ուղերձին մէջ նշուած է. «Ժողովուրդիս եւ անձամբ իմ անունովս սրտանց կը շնորհաւորեմ ձեզ՝ 2026 Յունիս 7-ին Հայաստանի Հանրապետութեան մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւններուն ձեր գլխաւորած “Քաղաքացիական պայմանագիր” կուսակցութեան արձանագրած յաղթանակին առթիւ, եւ յաջողութիւն կը մաղթեմ երրորդ անգամ ըլլալով կառավարութիւն կազմելու գործին մէջ:

Լիովին կը հաւատամ, որ տարածաշրջանին մէջ մնայուն խաղաղութեան ու կայունութեան հաստատման եւ այդ ուղղութեամբ անհրաժեշտ գործակցութեան ապահովման վերաբերեալ ձեր ռազմավարական տեսլականը յաջողութեամբ ակարտին պիտի հասնի», — գրած է Էրտողան՝ Փաշինեանին մաղթելով քաջառողջութիւն եւ բարեկեցութիւն, իսկ Հայաստանի ժողովուրդին բարգաւաճում եւ երջանկութիւն:

Փաշինեանը շնորհաւորած են նաեւ բազմաթիւ այլ ղեկավարներ, ինչպէս Իրանի նախագահը, Եւրոպական Միութեան բարձրաստիճան ներկայացուցիչներ, միջազգային գործընկերներ եւ կառույցներ: ■

ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԽԻՒՆԵՐԸ ԿՐ ԹՈՒԱՅՆԱՑՈՒԻՆ

ԹԱՆԳԱՐԱՆ-ՀԻՄՆԱՐԿԸ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ՄԸ ԿՐ ՄԿՍԻ

Կոմիտաս Վարդապետի հարուստ արխիւը միջազգային գիտական ու մշակութային հանրութեան աւելի հասանելի դարձնելու նպատակով, Կոմիտասի թանգարան-հիմնարկէն ներս պաշտօնապէս սկիզբ տրուեցաւ անոր ժառանգութեան թուայնացման ծրագրին: Այս կարեւոր աշխատանքը կ'իրականանայ Միջազգային գործարար կապերու աջակցութեան խորհուրդին (IBRS Council) եւ թանգարանին գործակցութեամբ:



Ծրագրի յաջողութեան մէջ առանցքային դերակատարութիւն ունի համաշխարհային ճանաչում վայելող ֆինանսական խորհրդատու եւ «UBS Financial Services»-ի փոխնախագահ Մաուր Զենեանը: Անոր նուիրատուութեամբ Լոնտոնէն ապահովուած է թուայնացման առաջին սարքը, որ հիմք պիտի ծառայէ կոմիտասագիտական թուային գիտական շտեմարանի ստեղծման: Միջոցառման ընթացքին թանգարանի տնօրէն Լուսինէ Սահակեան եւ IBRS Council-ի նախագահ Մարիամ Մանուկեան իրենց խորին երախտագիտութիւնը յայտնած են Զենեանին՝ ազգանուէր այս մեծ երազանքը կեանքի կոչելու իր տեսլականին համար:

Իր կարգին, Մարք Զենեան ընդգծած է, որ հայ ժողովուրդը հսկայական ներդրում ունի համաշխարհային մշակոյթի զարգացման մէջ, սակայն այդ ժառանգութիւնը բաւարար չափով ծանօթ չէ աշխարհին: Ան յոյս յայտնած է, որ այս նախաձեռնութիւնը սկիզբն է միայն, եւ ապագային կեանքի կը կոչուի Կոմիտասի ժառանգութեան ամբողջական թուային հարթակ մը: Այսպէսով՝ վարդապետին գործը հասանելի կը դառնայ միջազգային ուսումնասիրողներուն՝ Հայաստանը վերստին աշխարհին ներկայացնելով իբրեւ մշակութային հարուստ ժառանգութիւն ունեցող երկիր: ■

ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ – Ֆութպոլ

ՄԵՔՍԻՔԱՅԻ ՄԷՋ ՇՔԵՂ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ «ՄՈՒՆՏԻԱԼ-2026»-ԻՆ



Հինգշաբթի, Յունիս 11-ին, Մեքսիքայի մայրաքաղաքի «Ազթեքա» մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ ֆութպոլի համաշխարհային 2026-ի բաժակի («Մունտիալ-2026») բացման հանդիսաւոր արարողութիւնը:

Զեւնարկը գրեթէ ամբողջութեամբ կազմուած էր երաժշտական կատարումներէ. հանդէս եկան լատինական փոփ երաժշտութեան համաշ-

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԲԱՆԱՍԷՐ, ՄԱՏԵՆԱԳԷՏ ԿԱՐՕ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ՀԵՏ

Արմատներով պոլսեցի, Լիբանան հաստատուած ու Լիբանանը որդեգրած բանասէր եւ մատենագէտ Կարօ Աբրահամեանը Երեւան կ'այցելէր Մայիս ամսուան վերջատուութեան: Աբրահամեան հեղինակն է «Ժամանակակից իսթանպուլահայ գրողներ» (Ա. հատոր, «Գէորգ Մելիքիներ» գրական մրցանակ – թիւ 61, Անթիլիաս, Պէյրութ, 2004) աշխատասիրութեան, որուն Բ. հատորի պատրաստութեան վրայ կ'աշխատի ներկայիս: Իր ողբացեալ կնոջ՝ Վերժինին հետ հիմնադրած են «Փթիթ» մանկապատանեկան թերթն ու նոյնանուն կայքէջը: Կարոյին հետ զրուցեցինք իր ներկայ աշխատանքներուն, պոլսահայ գրողներու, «Փթիթ»-ի եւ այլ հարցերու մասին:



«Նոր Յառաջ» – Մասնագիտութեամբ տնտեսագէտ էք: Երբ սկսած էք հետաքրքրուիլ գրականութեամբ:

Կարօ Աբրահամեան – Տղայ տիոց ընթերցասէր եմ: Պոլսոյ ծնունդ ըլլալով հանդերձ՝ Պոլիսը Պոլսոյ մէջ չեմ ճանչցած, ճանչցած եմ Պէյրութի մէջ՝ շնորհիւ ընթերցումներու: Ամէն անգամ որ արձակուրդով Պոլիս կ'երթայի, հաճոյք կը զգայի խմբագրատունները այցելելով, պոլսահայ ծանօթ գրողներու հետ տեսնուելով եւ բաւական գիրք շարկած կը վերադառնայի: Ինքնաբերաբար հետաքրքրութիւն մը սկսաւ, ինքնաբերաբար հաճոյք զգացի եւ մանաւանդ վրաս ազդեցութիւն ունեցաւ բարեկամի մը այն ակնարկութիւնը, թէ՛ «Օղլում, դուն Պոլիս կու գաս, մերին մարդոց հետ կը տեսնուիս, մենք անոնց երեսը կը տեսնանք, քովերնին երթալու կը վախնանք»: Եւ այսպիսով է որ ծանօթացայ Զահրատին, Խրախունին, Ռոպէր Հատտէճեանին, եւ անոնք ալ կը հետաքրքրուէին մեզի պէս գրագէտներու հետ կապ ունեցող անձերով, մանաւանդ որ ես ծանօթ եւ ուսանողը եղած եմ Վահէ Վահեանին, Օննիկ Սարգիսեանին, դրացին եղած եմ Մուշեղ Իշխանին: Իրենք ալ մեզի հետ գրականութիւն կը փոխանակէին եւ այսպէսով զարգացաւ այս յարաբերութիւնը:

«ՆՅ» – Ուրեմն ինչպէս հիմա պատմեցիք, արդէն ուսումնասիրած էք «Ժամանակակից իսթանպուլահայ գրողները»: Ոմանց անձնապէս ծանօթ էք: Ըստ ձեզի ի՞նչն է որ իւրապատուկ է ժամանակակից պոլսահայ գրականութեան, բաղդատած արեւմտահայ գրականութեան հիմքը դրած պոլսահայ գրողներուն:

Կ. Ա. – Հարցը այն է, թէ պոլսահայ գրականութիւնը Պէյրութի շրջանակներուն մէջ այդքան ալ ծանօթ չէր, բացի որոշ գրագէտներէ, ինչպէս Գրիգոր Շահինեանէ մը, որ մտերիմներէն էր պոլսահայ գրողներուն, կամ ինչպէս Թորոս Թորանեանէ մը, բայց միւսները գրեթէ անծանօթ էին, հաւանաբար թրքական միջավայրը այդ պատուարը հանդիսացաւ այսինքն թրքութիւն-հայութիւն եւ կամ պոլսահայութիւն եւ կամ ալ պէյրութահայերը չկրցան յստակօրէն զանազանել: Այսինքն վերջ ի վերջոյ պոլսահայութիւնն է, մանաւանդ ներկայ գրողները, օրինակ՝ «Մարմարա»-ի



նակցիլ, մէկ գիշերուան մէջ պատրաստուեցայ որքան որ կրնամ եւ ծանօթացուցի այն Խրախունին, որ ճանչցած եմ իր տան մտերմութեան մէջ, ճանչցած եմ իր կիներ, ճանչցած եմ իր ասպնջականութիւնը: Նաեւ Խրախունին, երբ Պէյրութ եկած էր իր յոբելեանին առթիւ, 10 օր գրեթէ միասին էինք, սակայն ես զայն ճանչցած եմ իր նամակներուն ընդմէջէն, գետի պէս հոսող նամակներ էին, ես ալ կը զարմանայի, որ որոշ գրողներու մասին իր մտածումները եւ զգացումները կը վստահէր ինծի: Կրնան այդ նամակներէն որոշ հատուածներ գայթակղեցուցիլ նկատուիլ:

«ՆՅ» – Խրախունիին մօտ ի՞նչն է որ ձեզ ամենաշատը կը գրաւէ, գրողը, թե՞ մարդը:

Կ. Ա. – Խրախունին ազնուական մարդ մըն էր: Ո՛չ մէկ ատեն զինք առանց փողկապի, առանց բաճկոնի տեսած եմ, այսինքն կոճկուած էր

ՌՈՒՍԱՍՏԱՆ Կ'ԱՐԳԻԼԷ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԱՄԹԵՐՔԸ, ՄԻՆՁ...
(Շար. Ա. Էջէն)

մէջ յայտնած է, որ հայկական արդիական այգիներու եւ ջերմատուններու բերքը լիովին կը համապատասխանէ եւրոպական բարձրագոյն չափանիշներուն: Կառավարութիւնը հատուցանելով փոխադրական եւ մաքսային ծախսերը, կ'օգնէ յաղթահարելու դէպի նոր շուկաներ աշխարհագրական հեռավորութեան խոչընդոտը:

Այս աշակցութեան շնորհիւ, հայկական արտադրանքը արդէն յաջողութեամբ կ'արտածուի Վրաստան, Յունաստան, Ուքրաինա եւ Ղազախստան: Ի պատասխան ռուսական արգելքներուն՝ եւրոպական Միութիւնը Հայաստանին պիտի յատկացնէ 50 միլիոն եւրօ՝ արտածման կարելիութիւնները ընդլայնելու նպատակով: Արդէն իսկ հայկական ծաղիկներ արտածուած են Լաթվիա ու Նետերլանտներ, իսկ Յունիսի վերջաւորութեան ծիրան պիտի առաքուի Լեհաստան: ■

Խարհային աստղեր Շաքիրան եւ Մալուման, օփերայի իտալացի հռչակաւոր երգիչ Անտրէա Պոչելլին ու Քիմ Էճէան: Մրցաշարքին ոսկեայ բաժակը մարզադաշտ բերին ՖիՖԱ-ի նախագահ Ժանի Ինֆանթինօն եւ մեքսիքական ծագումով հոլիվուտեան աստղ Սելմա Հայէքը:

Բացման արարողութենէն անմիջապէս ետք, Ա. խմբակի ծիրէն ներս տեղի ունեցաւ Համաշխարհային բաժակի անդրանիկ հանդիպումը՝ կազմակերպիչ Մեքսիքայի ու Հարաւային Ամերիկէի հաւաքականներուն միջեւ, որ աւարտեցաւ դաշտի տէրերուն յաղթանակով՝ 2-0 արդիւնքով:

«Մունտրիալ-2026»-ը պիտի շարունակուի մինչեւ Յուլիս 19: Պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով ան կը համախմբէ 48 հաւաքականներ, որոնք բաժնուած են 12 խմբակներու: Մրցաշարքը միասնաբար կը կազմակերպեն երեք երկիրներ՝ Միացեալ Նահանգները, Գանատան եւ Մեքսիքան: Աւարտական մեծ հանդիպումը պիտի կայանայ Կիրակի, Յուլիս 19-ին, «Մեթլաքֆ» մարզադաշտին մէջ (Նիւ եորք / Նիւ Ճրքի): ■

Ո՛չ միայն հագուածքով, այլ նաեւ իր նկարագրով: Նոյնիսկ եթէ 10 տարեկան մանուկ մը տեսնէր, զայն անգամ կը յարգէր: Տարբեր մարդ մըն էր: Խոր ու ջինջ նկարագիր մը ունի Խրախունին, այն աստիճան որ կը շարժարէ մինչեւ որ այդ սեմպոլիզմի գաղտնիքներուն մէջ սուզուիք եւ փորձէք հասկնալ թէ ի՞նչ կ'ըսէ: Դուցէ միակ անձն էր Պոլսոյ մէջ, որ արտայայտուեցաւ կամ գրեց այնպիսի պատմական իրողութիւններու մասին, որ ուրիշներ չէին համարձակեր, նոյնիկ Ռոպէր Հատտէճեանը: Օրինակի համար նոյնիսկ պատմուածք մը ունի գիտաբեւեակալական ոճով գրուած, ուղղակի ամփոփուած հայոց պատմութիւն մըն է: Շատ քիչ են գրողները, բայց օրինակի համար կանուխ ձայնած աքաղաղներու մասին կամ Տէր Զօրի ոգիներուն մասին երբ կը խօսի Խրախունին, յստակ է ինչի մասին կը խօսի: Ես փորձեցի կամուրջ մը ըլլալ պոլսահայ կամ իսթանպուլահայ կամ իսթանպուլապոլսահայ գրականութիւնը ներկայացնելու եւ բազմաթիւ գրողներ մոռացութենէ փրկելու:

«ՆՅ» – Քիչ մը խօսիմք ձեր աշխատութեամբ հրատարակուած «Ժամանակակից իսթանպուլահայ գրողներ»-ու Ա. հատորին մասին: Իսկ Բ. հատորը ե՞րբ լոյս պիտի տեսնէ:

Կ. Ա. – Առաջին հատորը ստեղծագործական գրականութեան մասին էր, ներկայացուցի բանաստեղծութիւն, արձակ եւ թատերգութիւն: Երկրորդ հատորը գրեթէ պատրաստ է, պիտի ըլլայ հրապարակագրութիւն, մանկագրութիւն, լեզուագիրներ, բառարանագիրներ, բանասէրներ, յուշագիրներ, երգիծագիրներ եւ նաեւ պիտի ներկայացնեմ ժամանակակից մամուլը: Կը պատրաստեմ նաեւ երրորդ հատոր մը, սկսած եմ արդէն՝ թրքագիր պոլսահայ գրողները, որոնք բաւական մեծ քանակ մըն են՝ 100-էն աւելի եւ, որոնց մէկ մասը, եթէ կ'արտօնէք՝ Best seller-ի վերածուած են: Հատորի երկրորդ բաժինով ալ կը փափաքիմ ներկայացնել թարգմանական աշխատանք կատարողները, այսինքն հայերէնէ թրքերէնի եւ թրքերէնէ հայերէնի: Գալով Բ. հատորի հրատարակութեան ես չէ որ պիտի որոշեմ, թէ ե՞րբ լոյս պիտի տեսնէ: Ձեք կրնար հեղինակէ մը կամ աշխատասիրողէ մը պահանջել այս մէկը: Օրինակի համար եթէ առնենք Խրախունին, որ զանազան զարտուղի միջոցներով կ'ապահովէր իր ապրուստը եւ կը ստեղծագործէր, ինքը՝ պիտի հրատարակէ իր գիրքերը եւ յետոյ ինքը՝ պիտի ցրուէ նոյնինքն թղթատարի այգբան հսկայ գումարներ վճարելով:

«ՆՅ» – Ձեր ողբացեալ կնոջ՝ Վերժիհին հետ «Փթիթ» մանկապատանեկան հանդէսին եւ կալքէջին հիմնադիրներէն էք. ինչո՞ւ մանուկներու ուղղուած այս նախաձեռնութիւնը:

Կ. Ա. – Կինս թուաբանութեան ուսուցչուհի էր, բայց աշակերտներուն հետ կը նախընտրէր տեւաբար հայերէն խօսիլ եւ հայերէնով բացատրել, հայագիտական աւարտած էր եւ սիրտը հոն էր: Երբոր ես Պոլիսէն բաւական մեծ քանակութեամբ «Ժպիտ» մանկապատանեկան թերթերը բերի, ոգեւորուեցաւ՝ «Ինչո՞ւ մենք չկարենանք ընել» ըսելով: Մենք դժբախտաբար զաւակ չունեցանք եւ մեր ամբողջ սէրն ու գուրգուրանքը թափեցինք այս ծրագրին վրայ, սկսանք նախապատրաստական «0» թիւով մը եւ հասանք մինչեւ թիւ 19: Վերջին թիւը հրատարակուեցաւ Երեւանի մէջ Կրթութեան, գիտութեան, մշակույթի եւ մարզանքի նախարարութեան հովանաւորութեամբ եւ Յովհաննէս Թումանեան թանգարանի գործակցութեամբ: Մեզի համար իսկական պատիւ մըն էր, որ նախարարութիւնը մտածեց պէյրութահայ եւ հալէպահայ մանուկներու համար պարբերաթերթ մը պատրաստել եւ մեզի վստահեցան, նոյնիսկ ըսին որ «Փթիթ»-ը իրենց համար շատ սիրելի ծրագիր մըն է եւ նոյնութեամբ, առանց գրաքննութեան հրատարակուեցաւ: Դժբախտաբար արցախեան վերջին պատերազմը սկսաւ եւ յետոյ պաշտօնի փոփոխութիւններով պատասխանատուները իրենց պաշտօնին վրայ չմնացին եւ այդ ծրագիրը մնաց սաղմին մէջ: Այս, ինչ կը վերաբերի տպագիր «Փթիթ»-ին: Առաջին թիւը լոյս տեսաւ 2010 թուականին, տարին երեք թիւ յաճախականութեամբ, յետոյ վերածուեցաւ երկուքի, յետոյ մէկի եւ ստիպուեցանք դադարեցնել:

«ՆՅ» – Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութիւնը հովանաւորած է «Փթիթ» կալքէջի ստեղծումը: Ինչպիսի՞ շարունակութիւն պիտի ունենայ «Փթիթ»-ը:

Կ. Ա. – Մեզի առաջարկ ներկայացուեցաւ Կիւպէնկեան հիմնարկութեան կողմէ, տնօրէն Ռազմիկ Փանոսեանը ըսաւ՝ «Մենք կը հաւատանք արեւմտահայերէնի փրկութեան՝ թուայնացած, էլեկտրոնային տարածումով»: Մեզի համար իսկական ականադաշտ մըն էր, մտանք եւ բազմաթիւ դժուարութիւններու մատնուեցանք եւ սկսանք «Փթիթ»-ի էլեկտրոնային տարբերակի յաւելուածներով: Կինս էր գլխաւորաբար աշխատողը, ես կ'օժանդակէի եթէ պէտք ըլլար: Հիմա եթէ պատմուածքները եւ առակները հաշուենք, 50-է աւելի ներբեռնուած պատմուածք կայ, նոյնքան՝ առակներ, 100-ներով լեզուական խաղեր, 200-է աւելի թուաբանական խաղեր, գիտական, աշխարհագրական բաժիններ, ժպիտներ, կատակներ եւ հանելուկներ: Հիմա կնոջս մեկնումով գործը շատ դժուարացաւ, կը փորձեմ այդ մթնոլորտին մէջ մտնել: Խմբակ մը ունինք. տղթք. Արմէն Իւրնէշեան, օրդ. Հուրի Քէսթէնեան եւ Լոնտոն գտնուող համակարգչային

«ՏԵՍԱՅ ԼԱԻ ՄԱՐԴԻԿ, ԲԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ, ԲԱՐԵՒ ՏՈՒԻ, ԱՆՅԱՅ ԳՆԱՅԻ...»

– Վա՛յ, բան մը յիշեցուցիր:
– Ի՛նչ: Հաճիս պատմէ պապ: Միշտ կ'ըսեմ տէտէին մասին ինչ որ միտքդ գայ, գրէ՛ կամ ինծի պատմէ՛:
– Հա՛հ: Դուն մեր տունը կը յիշե՞ս: Ձէ, չես տեսած դուն հին ձեւը: Ուրեմն տէտէն՝ պապաս, ամէն առտու կ'արթննար, տանիք կ'ելլէր, երկինք կը նայէր եւ «դուրպան օլտոււ ալլահ» կ'ըսէր: Հահա: Կարծեմ դուրպան եղեր եմ Աստուծոյ ըսել է: Նորէն ալ վստահ չեմ: Փառք տալու ձեւ մըն է...



«Ինչո՞ւ անհեթեթ» պիտի ըսես: Աջիդ մանկութեան ընկերուհի մը, այնքան մօտիկ նստած, որ ձեր կօշիկները քիթ քիթի կը զարնուին յաճախ, վիզդ քիչ մը երկարած, ձախ երբ դառնաս՝ ժպիտը դէմքին մանկութեան ընկեր մը: Բոլորիդ դիմացն ալ Պուրճ Համուտի փողոցները: Ինչպէս որ են, ինչպէս որ միշտ եղած են: Տէր Մելքոնեան սրահէն կ'ելլէք, հրապարակ կը հասնիք, եւ տակաւին փո-

ծրագրաւորող Ռաֆֆի Բարսեղեան: Ներկայիս կ'աշխատինք այս խմբակը ընդլայնել, պիտի փորձենք այս խմբակին մասնակցողներ գտնել, ինչպէս երեւանէն Անի Թորանեան, Անի Տաքէսեան, եգիպտոսէն Մարուշ Երամեան, որոնք ունենան իրենց յատուկ էջը, որդեգրեն. այսինքն «Փթիթ»-ը այլեւս չի պատկանիր ինծի եւ կնոջս, կը պատկանի այս խմբակին: Այս բոլորէն դուրս ես գրականէն աւելի բանասիրական հետաքրքրութիւններ ունիմ, կը փորձեմ իմ ներգործումս ունենալ հայատառ թրքերէն մատենագիտական աշխատանքի մէջ: Ըրածս մեծ բան մը չէ, կը կարծեմ, բայց կը փորձեմ ներգործ մը ունենալ:

«ՆՅ» – Պէյրութ եւ Պոլիս արեւմտահայերէնի երկու կարեւոր կեդրոններ են: Զիրար լրացուցա՞ծ են, թե՞ զիրար անտեսած: Ինչպէ՞ս կը տեսնէք ապագան:

Կ. Ա. – Յաւալի հարցում մըն է այս մէկը: Ռոպէր Հատտէճեանէն երկրորդ հատորիս ներածականին համար յօդուած մը ստացած եմ, որուն վերջաւորութեան ան յստակօրէն կ'ըսէ. «Պոլսահայ գրականութեան ապագան մուլթ է»: Տակաւին վերջերս մահացաւ՝ Փետրուարին, վերջին հայագիր բանաստեղծը՝ Իգնա Սարգսալանը: Դժբախտաբար ժամանակները փոխուեցան, նոյնիսկ Պէյրութի մէջ հայախօսութիւնը ընկրկումի մէջ է, ասիկա ժամանակներուն պարտադրանքն է կամ սա անպիտան համակարգիչին կամ խելացի հեռաձայնին գործած աւերն է: Պոլսոյ մէջ բայց բացառիկ թրքագիր երիտասարդ գրողներ մէջտեղ ելած են եւ անդին խմբակ մը կայ, որոնք կը փորձեն պատնէշի վրայ կենալ Պէյրութի եւ Պոլսոյ համագործակցութեամբ, ինչպէ՞ս Հրայր Տաղլեանը, Վարանդ Քորթմոսեանը՝ համալսարանի դասախօս, «Ժամանակ»-ին կ'աշխատակցին, ես ալ պատուակալ աշխատակիցն եմ «Մարմարա»-ին, բայց շատ հազուադէպ կը գրեմ: Ինչպէ՞ս կարելի է զօդել այս գաղութները՝ չեմ գիտեր: Մարդիկ գիր-գրականութենէն հեռացած են: Օրինակի համար բարեկամ մը կը մահանայ, հազուագիւտ են այն անձերը, որոնք երկու տողէն աւելի կը գրեն ցաւակցութիւն մը յայտնելու. չեմ դատապարտեր, բայց կ'այպանեմ: Աւելին չըսեմ, բայց մենք կը փորձենք «Փթիթ»-ով գտնէ փոքրերուն մէջ խրախուսել հայերէնի հանդէպ սէրը՝ խաղալով, խօսելով, երգելով սորվիլ:

«ՆՅ» – «Փթիթ»-ի մասին յիշեցիք որ արդէն գործակցութիւն ունեցած էք Հայաստանի հետ, ապագայ գործակցութեան հեռանկարներ կա՞ն:

Կ. Ա. – Այո՛, ինչպէս որ ըսի՝ խմբակը մեծցնելով, նոր անդամներ ներգրաւելով, իւրաքանչիւրը իր էջը ունենալով: Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութեան պատասխանատուն յօժար էր իրենց հովանաւորութիւնը շարունակելու, բայց վերջ ի վերջոյ մենք ալ պէտք է ապացուցենք, թէ արժանի ենք այդ հովանաւորութեան եւ պիտի կարենանք կնոջս հաստատած այդ մակարդակը պահպանել:

Հարցազրույցը վարեց՝
ՅԱՐՈՒԹ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Երեւան ■

դոցի ելեկտրական թելերը գլխուղ վրայէն չեն անցնիր: Կը մնան դիմացդ, աչքերուդ առջեւ: Փողոցը կանգնած, ամառուան արեւը հոն է անշուշտ, բայց չորս կողմից մութ է, պատուհանները լաւ մը փակուած, մանկութեան ընկերուհիդ կօշիկն ալ գրեթէ անտեսանելի դարձած: Պահ մը ելեկտրականութեան հոսանքը կը խզուի, հարազատ զգացում մը պիտի ըսես, բայց այս անգամ մտքիդ հոսանքն է, որ անշատուած է, կէս ժամուան համար անկարող շրջագծելու թէ ուր ես: Կամ աւելի ճիշդ, շփոթած թէ ամէնէն լաւ ճանչցած փողոցներն ես...

Ելեկտրական երկաթէ վարագոյրները յամառօրէն քսուելով կը հեռանան եւ կակուղ թաթիկդ կը փորձես զոյգել պաստառին, որպէսզի մանկութեան ու պատանեկութեանդ հետ դուրս գաս դէպի ծանօթ ամայութիւն: Սակայն կը մնաս մանկութեան ընկերներով մէկ, իւրաքանչիւրը գիրկ առած իր արցունքով: Կաթիլներ, որոնք նման են գոյնով ու ձեւով եւ հասարակ են ներկաներու մեծ ամասնութեան: Աչքերը ջրոտած են ֆրանսական աթոռէ մը դիտուած յիշատակներով, կամ անծանօթ դէմքերու հարազատ ապրումներով:



Ֆրանսայի արեւը երբ կը յաջողի սրահ մտնել եւ աթոռ մը գտնել, շուրջդ կը նայիս եւ գիտես... նէնէիդ ո՛չ «եաւրում եաւրում» մը պիտի լսես, ո՛չ ալ կիսափլատակ ձեր պալատիկէն քար մը, որ ձայն առնէր եւ երգէր որ իրաւ է, իրաւ է: Քսան տարի առաջ գերդաստանի մը երեխան էիր, որ գուրգուրանքի աւազաններով Պուրճ Լամուտի տանիքները գոյութիւն ունեցած են, գոյութիւն ունին...

Կէս ժամուան սահմանափակումով երկու տարի առաջ շարուած ու մէկ-դի դրուած տողեր՝
«որպէս մի ծաղիկ հողից դուրս ելան
կեանքին ժպտացին, անցան գնացին
աշխարհը որպէս մի քնքուշ երազ
աչքովնին տեսան անցան գնացին»

Պաստառը կը դառնայ պատուհան
սրահը օճախ
արեւմուտքի սլաքը վերջապէս շունչ մը կը քաշէ
սուրճի սեղանին շուրջ հաւաքուած
մարդկայինը կը նստի
մարտը կ'անցնի
գեղեցիկ ապրիլը կը հասնի
տարազները կը թափթփին
խեղդող փողկապները ընկալող ձեռքերու պարող կտորներ
եւ ճեղու աշխարհէն բարով կու գայ
գարնան կարապետ ծիծեռնակ
եւ իւրաքանչիւր հանդիսատեսի աթոռէն վերցնելով կը տանի իր բոյնը

սրահ Ալֆորվիլի Հայ Մշակույթի Տուն (Ֆրանսա)
սրահին դուռը բացաւ՝ Նորա Թաշճեան
հեռու մօտիկ աշխարհ փոխադրեց՝ Հրայր Գալեմքէրեան
պատուհանէն՝ Հայկական Ոստան
ծիծեռնակներու երամ՝ Մեսրոպ Մաշտոց ակադեմիայի հարազատներ
պատմեց՝ ներկայ մը հեռացած, ձեռքը դարձի նամակ մը մնացած

ԾԱԽԻ ՊԻԼԱԼԵԱՆ ■

Լեւոն Շանթ Քոգիները ծարաւի – վէպ –

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԹԵԽԵՐՈՒՆ
ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ
Բ.

Նախորդ իրիկունը հիւրերու աղմուկին մէջ յայտներ էր Աշոտ Նորային, որ Կիրակի առտու պարոն Առաքելովի հետ պէտք է երթային Բալախանիի հեռուները մէկ-երկու հող տեսնելու «Ընկերութեան» ծրագրած նոր ձեռնարկի մը համար»:

Հաւանօրէն ուշ դառնային քաղաք: Եւ այդ տեսակ պարագաներուն պարոն Առաքելով սովորութիւն ունէր Աշոտը միասին առնելու տուն ճաշի: Իսկ տիկին Առաքելով ու աղջիկը այնպէս շուտով բաց չէին թողներ իրենց հիւրը, երբեմն մինչեւ ուշ գիշեր:

Այս բոլորը հասկցուցեր էր Աշոտ Նորային:

– Եւ այդքան ժամանակը ի՞նչ կ'ընէք տիկին եւ օրիորդ Առաքելովներու հետ միասին,– հարցուցեր էր Նորա կէս-լուրջ, կէս-կատակ:

– Վտանգաւոր ոչինչ կայ. մի՛ վախճար,– եղեր էր պատասխանը,– ահա հաշուեմ. տե՛ս, նախ տիկինը շուշեցի է, այսինքն գրեթէ ինծի հետ համագիւղացի. ամբողջ ժամանակը կը խօսինք Ղարաբաղի բարբառով, որ սքանչելի յարմարութիւն կու տայ եւ կատակի եւ սրախօսութեան: Երկրորդ՝ առատ դրամը նետեր է այդ ընտանիքը Եւրոպայի բոլոր կողմերն ու անկիւնները, ես ալ բաւական թափառած եմ ուսանողական տարիներուս հոս ու հոն. որով միշտ հաճելի հին յուշեր կան ըսելու ու խօսելու: Եւ երրորդ՝ երբ ամբողջ դրամագլուխը կը սպառենք՝ կը նստինք շորսով թուղթ խաղալու. եւ խիստ հետաքրքրական խաղ մը, որովհետեւ Առաքելով շատ զուարճալի առանձնայատկութիւններ ունի խաղալու ատեն: Կը տեսնե՞ս, հոգի՛ս, որ վտանգ չկայ:

Եւ հիմա Նորա «վտանգի» տեսակէտէն ապահով էր բոլորովին, միայն թէ իր ամբողջ օր մը Առաքելովի գործարանը գտնուիլը կորսնցուցեր էր այլեւս իր ներքին իմաստը, անիմաստ օր մըն էր, որ կերպ մը պէտք է անցընէր:

Փաթթուեցան երկու աղջիկները ոտքէ գլուխ իրենց ձմեռուան պատեաններուն մէջ եւ ելան պարտէզ:

Հաճելի էր անկախ ու անբիծ ձիւներուն վրայէն քալելը ոտքերուն կնիքը թողնելով իրենց ետեւէն:

Մանր-ծանր ու խօսելով հասան պարտէզին ծայրը եւ նսթեր ետ

դառնալ կ'ուզէր արդէն, որ Նորան թեւէն քաշեց դէպի ծովեզրը:

Արեւի շողերը պայծառ լոգանք մը կ'առնէին պաղ ջուրերուն մէջ, միեւնոյն ժամանակ շատ հաճելի տաքութիւն մը կը թափէին եզերքի ձիւներուն եւ այդ ձիւներուն կոխկռտող աղջիկներուն վրայ:

Նորա առաջնորդեց մինչեւ ջուրին եզրը եւ կանգ առաւ հոն. ճիշդ հոն, ուր անգամ մը իրիկուն մը, կեցած էր Աշոտի հետ, ինքը կեցաւ հոն, ուր կեցած էր ինքը այն օրը, եւ նսթերն ալ կանգնած մնաց հոն, ուր Աշոտն էր կեցած այն իրիկունը:

Եւ կեցան երկու աղջիկները, ջուրին դէմը անխօս:

Նորա կամաց մը գոցեց աչքերը եւ չքացան արեւ, լոյս ու առաւօտ, իրիկուն էր, արդէն կէս մութ. աւազներուն վրայ կեցած է ինքը ներքին զսպուած յուզումով մը. եւ կը զգայ մէջքին վրայ թեւ մը, որ կը քսուի, որ կը փարի ու կը քաշէ:

Եւ իրաւ որ թեւը կը կծկուէր, կը քաշէր: Նորա վախցաւ, որ կորսնցնէ պիտի հաւասարակշռութիւնը եւ վար չիյնալու համար բացաւ յանկարծ աչքերը:

Բացաւ, ծոցեցաւ քիչ մը դէպի նսթերը. թեւերը քնքշութեամբ նետեց անոր վիզը եւ շրթունքներով փակաւ աղջկայ շրթունքներուն ամուր, խիստ ամուր համբոյրով մը:

Եսթեր յանկարծակիի եկած այդ անակնկալ եւ այդպէս բուռն քնքշանքէն հազիւ կրցաւ պատասխանել համբոյրին. եւ հիմա հարցական ու զարմանքով կը նայէր անոր:

– Շատ լաւ աղջիկ ես, Եսթեր. շատ կը սիրեմ քեզի,– եղաւ բացարձակօրէն համոզիչ բացատրութիւնը:

Եւ անոնց քայլերը ուղղուեցան դէպի իրենց նաւամատոյցը, երբ քրոջը ձայնը տունէն Եսթերը կանչեց:

* * *

Նորա կեցաւ մինակ նաւամատոյցին վրայ եւ երկար կը դիտէր պարանով կապուած իւղ փոխադրելու բեռնանաւը, որուն վրայ հիմա ո՛չ աշխատանք կար ո՛չ մարդ:

Եւ երբ դանդաղ քայլերով գործարանի հնոցարանին քովէն տուն կը վերադառնար, մտածեց յանկարծ այցելութիւն մը տայ իր հիացողին: Գաղափարը շատ հաճելի եղաւ: Եւ խաղը աւելի եւս տաքցնելու համար ուզեց յանկարծակիի բերել:

Զգուշութեամբ նեղ ձեղք մը ըրաւ հնոցարանի երկու ահագին դռներուն մէջ ու կամաց մը ներս սպրդեցաւ:

(Շար. 55)



CHENE

Braderie CHENE
5 et 6 Décembre 2026
Vente artisanat d'Arménie, livres, épicerie
et son bar buffet

Maison des Arts
1 Place Jane Rhodes
92350 Le Plessis-Robinson

EXPOSITION

**DU 22 MAI
AU 31 OCTOBRE
2026**

Musée de Préhistoire
de Lussac-les-Châteaux
Avec le Musée régional
du Shirak, Arménie

21 route de Montmorillon
86320 Lussac-les-Châteaux
05 49 83 39 80
www.lasabline.fr

Entrée Gratuite

**AUX
ORIGINES
DE L'ARMÉNIE
PRÉCHRÉTIENNE**
DU KOURO-ARAXE À L'OURARTOU

La Croix Bleue des Arméniens de France
Section Dirouhie Missakian
de Sevrans-Livry
organise un

**AVANT LES CONGÈS
D'ÉTÉ**

**Repas
entre amis !**
Retrouvons-nous
autour d'une

Paëlla

Repas organisé
au profit des
œuvres de la
Croix Bleue

Tombola

**Dimanche
5 juillet 2026
à partir de 12h30**

Participation : 35€ adulte
10€ moins de 10 ans

**RÉSERVATIONS
JUSQU'AU 30 JUIN AUPRÈS DE
LÉON : 06.42.60.00.20
OU SÉVANE : 06.11.86.08.11 APRÈS 19H**

à la Maison de la Culture Arménienne
17, rue Charles-Péguy - 93190 Livry-Gargan

**Bonnes
VACANCES**

Commande en ligne et livraison dans toute la France sur
www.markar.fr

markar
Épicerie fine orientale

- Pasterma et soudjouk maison
- Vins arméniens et raki
- Baklava, helva et tcheurek
- Brandys Ararat
- Confiture, jus de fruits d'Arménie
- Pâte filo, kadaïf, boulgour

162 avenue Henri Barbusse
92140 Clamart

01 46 44 80 14

IL PESCATORE
Pizza artisanale

Deliveroo

**Du mardi au samedi
de 12h à 15h / de 19h à 22h**
1 rue Marcel Sembat,
94240 L'Hay-les-Roses
Tél : 01 466 466 12

Sur place ou à emporter
**Nous sommes aussi au marché de Bourg-la-Reine,
tous les mercredis et samedis**

LES DIALOGUES D'ALFORTVILLE

En partenariat avec la ville d'Alfortville, un cycle de rencontres publiques consacrées à l'histoire, à la culture arménienne et à leurs relations avec la France, est proposé sur une période de trois ans allant de 2025, année du 140^e anniversaire de la Ville à 2027. Intitulé « Les dialogues d'Alfortville », il permet de familiariser le public avec les recherches et les débats contemporains sur les questions arméniennes. Les séances, organisées par l'Association pour la Promotion de la Culture Arménienne en France (APCAF) ont lieu au rythme d'une par trimestre, dans la salle de l'école maternelle Mariam Arabian, 2 rue Komitas à Alfortville. Voici le programme de la prochaine séance :

ALFORTVILLE ET ARMÉNIE DANS L'HISTOIRE ET L'AVENIR DU GAZ

Mardi 16 juin | 20h15

ALFORTVILLE, ACTEUR DE L'HISTOIRE DU GAZ EN FRANCE

Jacques Deyirmendjian

Président de Deynergies, ancien délégué général du groupe Gaz de France

ARMÉNIE, ACTEUR DE L'APPROVISIONNEMENT EN GAZ DE L'EUROPE?

Albert Grigoryan

Senior Business Developer, ancien directeur d'Engie Russie et Ukraine

Modération par Robert Aydabirian

Ancien cadre dirigeant d'entreprises informatiques internationales

ENTRÉE LIBRE

École Maternelle Mariam Arabian | 2 rue Komitas | 94 140 Alfortville

Alfortville



Maison de la Culture
Arménienne de Paris
17 rue Bleue
75009 Paris



Հանդես

le 20
Juin

à
16h



VENEZ EN FAMILLE !

Venez nombreux Samedi
20 Juin 2026 à 16h

pour notre Kermesse et Fête d'école annuelle !

BRAINTRUST

Société d'expertise comptable

Armen KURDOGHIAN

Expert-comptable

2, rue de l'Eglise
92600 Asnières-sur-Seine
France

Tél. : +33 (0)6 63 04 78 34

Email : armen.kurdoghlian@braintrust-cpa.fr

Erevan Artisan / Ebéniste d'art



Restauration de meubles / Tapisserie

Georges ASSADOURIAN



93 rue de la Cosarde, 94240 l'Hay-les-Roses

Tél : 01 45 47 02 49 / 06 08 82 79 81

www.erivan.fr



Erevan Artisan

Bellefontaine en Fête!

JUILLET

12

2026

À partir de 11h
**JOURNÉE PORTES-OUVERTES
DE LA COLONIE !**

Venez en famille, entre amis
Spectacles des enfants,
animations, buffet...



Ձեր ծանուցումները եւ գովազդները կրնաք ուղարկել

annonces@norharatch.com հասցեին:

Veuillez envoyer vos annonces à l'adresse ci-dessus



6-14 տարեկաններու համար

Ի՞նչ է Ափէ-Ափ ամառնային ծրագիրը

Ափէ-Ափ ամառնային ծրագիրը ստեղծուած է Հայաստան բնակող եւ Սփիւռքէն Հայաստան այցելող երեխաներուն համար:
Կ'առաջարկուին ստեղծագործական, մշակութային եւ մարզական աշխատանոցներ:

Ծրագրի ամփոփ կէտեր

- ստեղծագործական եւ մարզական աշխատանոցներ
- փորձառու ուղեկիցներու խումբ
- փոքր խումբեր
- ապահով միջավայր
- սնունդ

Աշխատանոցներ

- նկարչութիւն
- քանդակագործութիւն
- թատրոն
- երգ եւ պար
- խոհանոց
- այգեգործութիւն
- կենդանիների խնամք
- ֆուրբոլ եւ մարզական խաղեր
- լող
- նշանառութիւն
- ձիավարութիւն

Տեղեկութիւն

- Թուական՝ Յուլիս 13 – 24, 2026
- Ժամ՝ 10:00 – 17:00
- Վայր՝ Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
- Հասցէ՝ Առնո Բաբաջանյան 38/1 Մալաթիա-Սեբաստիա (Երեւան)
- Մասնակցութեան սակ՝ 55 000 ₺ (150\$) իրաքանչիւր երեխայի համար, ներառեալ՝ ճաշ, նախընթրիք եւ մէկ պտոյտ
- Փոխադրամիջոց՝ անհրաժեշտութեան պարագային
- Արձանագրութեան վերջնաժամկէտ՝ 1 Յունիս 2026



Դիմումագիր

← արձանագրութեան համար

Կապ մեզի հետ՝ haratchfondation@gmail.com
+374 77460112 / +374 77460118



CROIX BLEUE DES ARMÉNIENS DE FRANCE SECTION ASTRIG

Gala de fin d'année exceptionnel

SAMEDI
13
JUN À 19H

Troupe de danse
AMBERD
invitée d'ARMENIE

École de langue
SONA SUREKEN

Directeur artistique
EDGAR HOVHANNISYAN

Professeurs de danse :
Davit Barkhudaryan
Hasmik Artsruni

Troupe de danse
ASTRIG

Directeurs artistiques
**KATARINA ET
ARAM ARZUMANYAN**

RÉSERVATIONS
☎ +33 6 77 05 42 38
Silva
☎ +33 6 72 45 73 47
Maral

ESPACE CHARLES AZNAVOUR
Avenue Paul Vaillant Couturier, Arnouville

Croix Bleue des Arméniens de France
Section Astrig

VENDREDI 19 JUIN
19 H 30

Fête de la MUSIQUE



Concert Dhol & Duduk
avec la participation de
Artyom Minasyan & Davo Abrahamyan

Entrée libre

Buffet de douceurs salées & sucrées

71 avenue Henri Barbusse
Arnouville



Renseignements
Silva 06 77 05 42 38

ՀՈԿՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

«ԱՆՈՒՇ»



Երաժշտությունը՝ Արմեն Տիգրանյանի
Անուշի դերերով՝ Լուսինե Լևոնի

Studio Espace Culturel le 148

148 avenue Paul Vaillant Couturier ALFORTVILLE

2026 Թ. ՀՈՒՆԻՍԻ **14-ին Ժ. 18:00-ին**

Մուտքի տոմսերը ամրագրել 06 67 38 97 45 հեռախոսահամարով:

*l'actualité arménienne
en français et en arménien*



de la lecture pour tout le monde!

journal tri-hebdomadaire en arménien
hebdomadaire en français
et abonnement site norharatch.com

ABONNEMENT FORMULE INTÉGRALE

Trois fois par semaine, **ՄԵԼԻՍ** le journal en arménien
Chaque jeudi, **NH Hebdo** en français, en supplément

300 euros pour la France – 370 euros pour l'étranger

- ☐ Je m'abonne ☐ J'offre un abonnement
☐ Je me réabonne

Nom
Prénom(s)
Adresse
Commune
Email
Téléphone



Chèque à l'ordre de Nor Haratch
à envoyer avec la présente fiche
à CSCRA - 214, rue du Faubourg Saint-Martin - 75010 Paris

Virement bancaire

BNP-Paribas -
Agence Paris Montholon (00777) -
IBAN - FR76 3000 4007 7700 0104 3954 488
BIC - BNPAFRPPXXX

Téléphone : 07 66 98 15 75

E-mail : abonnement@norharatch.com

ABONNEMENT FORMULE NH HEBDO

Chaque jeudi, hebdomadaire en français **NH Hebdo**
+ le numéro du jeudi en arménien **ՄԵԼԻՍ**

200 euros pour la France – 300 euros pour l'étranger

- ☐ Je m'abonne ☐ J'offre un abonnement
☐ Je me réabonne

Nom
Prénom(s)
Adresse
Commune
Email
Téléphone



Chèque à l'ordre de Nor Haratch
à envoyer avec la présente fiche
à CSCRA - 214, rue du Faubourg Saint-Martin - 75010 Paris

Virement bancaire

BNP-Paribas -
Agence Paris Montholon (00777) -
IBAN - FR76 3000 4007 7700 0104 3954 488
BIC - BNPAFRPPXXX

Téléphone 07 66 98 15 75

Email abonnement@norharatch.com

*l'actualité arménienne
en français et en arménien*



de la lecture pour tout le monde!

NH Hebdo,
Nor Haratch du jeudi
et site norharatch.com (en français)